ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«12» 06 2020թ. N 201/465

Ա/Ձ «Արթուր Պողոսյան»

Ա. Պողոսյանին

ՀՀ Երևան, Ն. Տիգրանյան 27

էլ. հասցե՝ autoworld18@mail.ru

ՀՎՀՀ 26537712

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Արթուր Պողոսյան» Ա/Ձ-ի միջև 20.02.2020թ. կնքված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-Ա/ՄԱՍԵՐ4/1 (11/137-2020) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 27.03.2020թ. կնքված N 1 (11/274-2020) համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 30.04. 2020թ. մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները՝ (N 80 չափաբաժնով՝ 18000 (տասնութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 3 հատ ավտոմեքենաների պահեստամասեր, N 87 չափաբաժնով՝ 85000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 1 հատ ավտոմեքենաների պահեստամասեր, N 97 չափաբաժնով՝ 28000 (քսանութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 1 հատ ավտոմեքենաների պահեստամասեր, N 100 չափաբաժնով՝ 21600 (քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 2 հատ ավտոմեքենաների

պահեստամասեր, N 129 չափաբաժնով՝ 8000 (ութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 4 հատ ավտոմեքենաների պահեստամասեր), սակայն մինչ օրս չի մատակարարվել և 08.06.2020թ. N 3 գրությամբ «Արթուր Պողոսյան» Ա/Ձ-ն հրաժարվում է մատակարարել վերոհիշյալ ապրանքները:

Համաձայն Պայմանագրի 2.1.7.-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի՝ «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1. կետի «բ» ենթակետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեակացնում ենք, որ «Արթուր Պողոսյան» Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի համաձայնագրեր՝ Հավելված N 4.1 և Հավելված N 5.1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 176660 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որպես տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումար:

Ա. Հակոբյան

Հեռ. (015) 579-487